Հավելված 1

**Անեսթեզիոլոգիա**

Թեմա[1]՝ **Անեսթեզիոլոգիա**

Վերապատրաստման վայր՝ **Էրեբունի ԲԿ**

**Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ**

Դասընթացի **գործնական** և **տեսական** բաղադրիչների տարանջատումը համապատասխանաբար **4:2**

Վերապատրաստման պատասխանատու՝ **Արմեն Վարոսյան**

**Սարգիս Ղազարյան**

Տևողություն՝ 4 շաբաթ (20օր)

| Թեմա | Նկարագիր | Տևողություն (1 ժամ՝ 60ր) | Պատասխանատու | Ակնկալվող արդյունք |
|---|---|---|---|---|
| 1. Անեսթեզիոլոգիայի հիմնական դրույթները: Ծանոթություն վիրահատարանի աշխատանքի հետ (անեսթեզիոլոգիական սարքեր, հիվանդների մոնիտորինգ անզգայացման ընթացքում) | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 12 ժամ<br>9:00-15:00 | Սարգիս Ղազարյան<br>Արմեն Վարոսյան<br>Էմիլ Վարդապետյան | Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան.<br>• Ընտրել տվյալ պացիենտին համապատասխան անզգայացման տարբերակը, գնահատել |

[1] Ընդհանուր նկարագիր - *ՀՀ մարզերից և Արցախից տեղահանված Երևանում վերապատրաստվող բժիշկներն իրենց վերապատրաստման ղեկավարներին ուղեկցում են համայցերի ժամանակ, ինչպես նաև աջակցում են նրանց հիվանդների վարման ընթացքում՝ ներառյալ վիրահատություններն ու պրոցեդուրաներ: Վերապատրաստվող բժիշկները սովորում են նոր մեթոդներ, ծանոթանում նոր տեխնոլոգիաների և գործիքների կիրառմանը, մասնակցում իրենց ոլորտի ամենաթարմ նորամուծությունները ներկայացնող դասախոսությունների և դասընթացների:*

*1 ժամ ընդմիջում նախատեսված է դասընթացի յուրաքանչյուր օրվա ընթացքում, որը ներառված չէ /9:00-15:00/ 6 ժամվա մեջ*

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. Անեսթեզիոլոգի նախավիրահատական այց և հիվանդի զննում: Գործելակարգերին համապատասխան ինքնուրույն 3 այցի իրականացում՝ ղեկավարի հսկողությամբ: Ծանոթացում ժամանակակից ուղեցույցներին | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 24 ժամ<br>9:00-15:00 | Սարգիս Ղազարյան<br>Արմեն Վարոսյան<br>Էմիլ Վարդապետյան | համապատասխան ռիսկերը, նախապատրաստել հավանական ընթացքներին<br>• Իրականացնել հստակ մոնիտորինգ վիրահատական և հետվիրահատական շրջանում,<br>• իրականացնել անհրաժեշտ միջամտություններ ոչ ստանդարտ իրավիճակներում՝ դժվար ինտուբացիա, տրանսֆուզիոն թերապիա, վերակենդանացում<br>• տիրապետել ժամանակակից տեղային անզգայացնող դեղամիջոցների կիրառման, ինչպես նաև հետվիրահատական վերականգնողական և հակացավային սխեմաներին,<br>• կիրառել թիմային արդյունավետ հաղորդակցություն՝ հիվանդի անվտանգ և արդյունավետ խնամքը և տեղափոխումն ապահովելու համար: |
| 3. Ռեգիոնալ անզգայացում, իրականացման տեխնիկան, ղեկավարի հսկողությամբ 5 անզգայացման կատարում | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 24 ժամ<br>9:00-15:00 | Սարգիս Ղազարյան<br>Արմեն Վարոսյան<br>Էմիլ Վարդապետյան | |
| 4. Անզգայացման առանձնահատկությունները երեխաների մոտ: Մասնակցություն մինչև 5 մանկական վիրահատական միջամտությունների ղեկավարի ասիստենտի կարգավիճակում | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 24 ժամ<br>9:00-15:00 | Սարգիս Ղազարյան<br>Արմեն Վարոսյան<br>Էմիլ Վարդապետյան | |
| 5. Անզգայացման առանձնահատկությունները որոշ ուղեկցող հիվանդությունների ժամանակ: Դժվար կառավարվող շնչուղիներ, հմտությունների ուսուցանում, կոկորդային դիմակների կիրառման ուսուցանում: Ղեկավարի հսկողությամբ 1 – 2 դժվար ինտուբացիաների ինքնուրույն իրականացում | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 6 ժամ<br>9:00-15:00 | Սարգիս Ղազարյան<br>Արմեն Վարոսյան<br>Էմիլ Վարդապետյան | |
| 6. Ինֆուզիոն և տրանսֆուզիոն թերապիան անզգայացման ժամանակ, արյան և նրա բաղադրամասերի փոխներարկման ցուցումները: | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների | 6 ժամ<br>9:00-15:00 | Սարգիս Ղազարյան<br>Արմեն Վարոսյան<br>Էմիլ Վարդապետյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ներերակային ներարկման հեղուկների տեսակների որոշում և քանակների հաշվարկ, էլեկտրոլիտների հաշվարկ | • Տեսական հարցերի քննարկում | | | |
| 7. Սուր հետվիրահատական ցավ, քրոնիկ ցավային համախտանիշ: Հետվիրահատական շրջանի վարումը, մոնիտորինգ: Ցավազրկող ժամանակակից դեղորայքի և սխեմաների կիրառման ուսուցանում | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 6 ժամ<br>9:00-15:00 | Սարգիս Ղազարյան<br>Արմեն Վարոսյան<br>Էմիլ Վարդապետյան | |
| • Այցելություն Հանրապետական գիտաբժշկական գրադարան (ՀԳԲԳ) | Ժամանակակից բժշկական գրականության և ամսագրերի ընթերցում | 12 ժամ | Աննա Շիրինյան | |
| • Դասախոսություններ ՀԳԲԳ-ում | • Գերիատրիայի հիմունքները: Ծերացումը որպես 21-րդ դարի հիմնախնդիր<br>• Բժշկութուն և իրավունք<br>• Ցավի կառավարում<br>• Ալերգիկ հիվանդություններ<br>• Ապացուցողական բժշկության հիմունքներ | 6 ժամ | Արթուր Թորոսյան<br>Նարինե Մովսիսյան<br>Վիոլետա Զոփունյան<br>Արմինե Հակոբյան<br>Արա Արշամյան | |
| • Համակարգչային գրագիտության դասընթացներ[2] ՀԳԲԳ-ում | MS Word, MS Excel, MS PowerPoint ծրագրեր և համացանց | 24 ժամ | Սեդա Աբգարյան | |
| • ՇՄԶ արդյունքների ամփոփում[3] | Կլինիկական մեկ դեպքի, մեկ հոդվածի (ռեֆերատ) ներկայացում | 2 ժամ<br>14:00-16:00 | Համբարձում Սիմոնյան<br>Առնո Հովհաննիսյան | |

[2] Ընտրովի է և ներառված չէ 120 ժամի մեջ

[3] Որպես ծրագրի բաղկացուցիչ մաս՝ մասնակիցները ներկայացնում են կլինիկական դեպքի նկարագրություն և ռեֆերատ: Այս հանձնարարությունն իրագործելու համար մասնակիցներն օգտվում են Հանրապետական գիտաբժշկական գրադարանի ռեսուրսներից (տպիչներ, համակարգիչներ, համացանց), որոնք ապահովվել են ՀՕՖ-ի կողմից: